



## Հարիւր Տարեկան

Ահա կազմակերպութիւն մը հարիւր տարեկան հասած,  
Իտոնարի ու համեստ, կարօտեալի պայմաններով սկսած,  
Աստուծոյ հաւատարմութեամբ, ծաղկած ու բարգաւաճած,  
Աւետարանչականը հիմա հարիւր տարիներ է նուաճած.  
Տարիները շուտ թաւալեցան եւ առաջնորդներ փոխուեցան  
Իսկ աստուածատուր տեսիլքը օգնելու, ձեռք երկարելու օգնութեան,  
Անշուշտ կը շարունակուի, պիտ շարունակուի անվախճան:

Անշուք պայմաններով, եկեղեցիին մէջ Աւետարանական,  
Ծնունդ առաւ այս սուրբ մարմինը Աւետարանչական,  
Տարուէ տարի, վերին օգնութեամբ Արարչային  
Աղօթեց, ծրագրեց ու հաւատարիմ գործեց կայծոգին.

Աստուած ալ վերէն նայելով, յորդառատ Ան օրհնեց,  
Տուաւ միջոցներ, անհամար կարելիութիւններով օժտեց,  
Արժանաւոր առաջնորդներ, նիւթական աղբիւրներ հայթայթեց:

Ամէն կողմ աջակցութեան, օգնութեան ձեռք երկարեց,  
Ջարդէն ճողոպրած բեկորներուն ան շատ օգնեց,  
Ապաստան, ապաւէն ու յստակ յոյս ներշնչեց,  
Տուաւ կրթութիւն ու սնունդ, գուլպա հաւատք ներգործեց:  
Բաժնեկով սեր աստուածային, նայող, սեւեռող դէպ երկինքի,  
Սփիւռքի ստուար գաղթօճախներէն եւ մէջն մեր մայր հայրենիքի,  
Հարագատ հայէն սկսած, նոյնիսկ հասաւ հեռաւոր օտարի:

Տարբեր ազգերու, գոյներու եւ ցեղերու առանց խտրութեան,  
Կատարեց շքեղ աստուածատուր գործն բարեգործական,  
Կրթեց ապագայ առաջնորդներ, շինեց ամբոցներ ուսման,  
Հասնելով քսան եւ երկու երկիրներ ամբողջական:  
Ծառայելով բոլորական, անխոնջ անանձնական,  
Ամէն հնարքով սատարեց ազգին ու մարդուն անխտրական,  
Վստահելով ամէն բան Արարչին պատուական:

Միշտ Փառք Աստուծոյ եւ շնորհակալութիւն բոլորին,  
Անոնց, որոնք անսակարկ տուին, մոխրացան, ծառայեցին,  
Չգացում երախտագիտական, շնորհակալ մաքուր սիրտ,  
Թող պարգեւէ Բարձեայն երկնային բոլորիս ընդմիշտ.  
Աղօթք, սատար, օժանդակութիւն, նուիրական սպասաւորութիւն,  
Որպէսզի երկարի աննկուն տարիները Աւետարանչականին,  
Անդուլ գործածուի պարգեւելով աւիշ, հիւթ, ու ցօղ աստուածային: